ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 23

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2019թվականի օգոստոսի 19-ի թիվ 06 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՂԱՋԱՐՅԱՆ ՄԵՐԻ
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2019թվականի օգոստոսի 19-ի
Թիվ 06 արտահերթ նիստի N23 որոշման

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 06 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Առատաշեն համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Համայնքների միավորման (խոշորացման) մասին
3. Գումար հատկացնելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքների միավորման գործընթացը, այլ համայնքների հետ Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի միավորման նպատակահարմարության հարցը, արտահայտելով համայնքի բնակչության դիրքորոշումը, ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի բնակչությանն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելված N1-ի:

2. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելված N2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԱՋԱՐՅԱՆ ՄԵՐԻ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2019թվականի օգոստոսի 19-ի
Թիվ 06 արտահերթ նիստի N24 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՈՒՂԵՐՁ

Առատաշեն համայնքի հարգելի բնակիչներ

Առատաշեն համայնքի ավագանին, քննարկելով համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով Առատաշեն համայնքի բնակչության շրջանում տիրող գերակա տրամադրությունը այլ համայնքների հետ Առատաշեն համայնքի միավորման գործընթացի նկատմամբ, հաշվի առնելով, որ այլ համայնքների հետ միավորումը չի տալիս ֆինանսական լրացուցիչ հնարավորություններ կամ նոր լիզորություններ համայնքներում առկա խնդիրների (հողերի, ոռոգման, ճանապարհների, փողոցների, բնակչության հետ ամենօրյա շփումների, էլեկտրականության, աղետների ռիսկերի կանխարգելման, իրավապահության, անվտանգության և բազմաթիվ այլ պատճառներ), որոնք չեն կարող ստանալ օպտիմալ և արագ լուծում:

Ավելի արդյունավետ համարելով Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ նախատեսված միջհամայնքային համագործակցության հնարավորությունները՝ Առատաշեն համայնքի ավագանին արտահայտելով իր կանխորոշիչ դիրքորոշումը, հայտարարում է, որ նպատակահարմար չի համարում համայնքի միավորումը որևէ այլ համայնքի հետ:

Որպես Առատաշեն համայնքի ներկայացուցչական մարմին, համայնքի ավագանին վստահեցնում է, որ կիսում է համայնքների միավորման գործընթացի նկատմամբ ձեր կարծիքն ու դիրքորոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասություններով:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված՝ համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը՝ գործընթացը շարունակելու դեպքում պարտադիր անցկացնելով հանրաքվե:

Համայնքի ղեկավար՝ **Վ. Հարությունյան**

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2019թվականի օգոստոսի 19-ի
Թիվ 06 արտահերթ նիստի N24 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՈՒՂԵՐՁ

Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանին՝ որպես ներկայացուցչական մարմին, քննության առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով այդ գործընթացի նկատմամբ համայնքի բնակչության ունեցած բացասական կարծիքը, նպատակահարմար չի գտնում Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի միավորումն այլ համայնքի կամ համայնքների հետ:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված՝ համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը՝ գործընթացը շարունակելու դեպքում պարտադիր անցկացնելով տեղական հանրաքվե:

Համայնքի ղեկավար՝ **Վ. Հարությունյան**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքների միավորման գործընթացում Առատաշեն համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտող համայնքի բնակչությունն ու կառավարությանն ուղղված ուղերձների ընդունումը բխում է համայնքի ավագանու կարգավիճակից, համայնքերի միավորումը Առատաշեն համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտելու անհրաժեշտությունից՝ ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով:

Համայնքի ղեկավար՝ **Վ. Հարությունյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 25

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, պարտադիր զինվորական ծառայության մեկնողներին և վերադարձողներին 2019թվականի բյուջեից հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելված N3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՂԱՋԱՐՅԱՆ ՄԵՐԻ
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ N3
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 19 -ի
Թիվ 06 նիստի N25 որոշման

ՑՈՒՑԱԿ

Առատաշեն համայնքից պարտադիր զինվորական ծառայության մեկնողներին և վերադարձողներին դրամական օգնություն տրամադրելու

1.	Սարկիսով Մուրադ Մնացականի	20000 (քսան հազար) դրամ
2.	Սարկիսով Մերուժան Սերգեյի	20000 (քսան հազար) դրամ
3.	Ասատրյան Համլետ Լաերտի	20000 (քսան հազար) դրամ
4.	Նահապետյան Տիգրան Հրաչյայի	20000 (քսան հազար) դրամ
5.	Տերտերյան Նարեկ Մարտինի	20000 (քսան հազար) դրամ
6.	Թեմուրյան Գարիկ Վարդգեսի	20000 (քսան հազար) դրամ
7.	Հովհաննիսյան Գոռ Գաբրիելի	20000 (քսան հազար) դրամ
8.	Մանուկյան Նարեկ Հրաչի	20000 (քսան հազար) դրամ
9.	Օհանյան Աշոտ Գարիկի	20000 (քսան հազար) դրամ

ՑՈՒՑԱԿ

Առատաշեն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու

1.	Սահակյան Նարինե Պետրոսի	40000 (քառասուն հազար) դրամ
2.	Սահակյան Գեղեցկուհի Համբարձումի	40000 (քառասուն հազար) դրամ
3.	Ասոյան Սուսաննա Անդրանիկի	40000 (քառասուն հազար) դրամ